



## «ԶԱՐՄԱՆԱԶԱՆ» 2020

Արձանագրութիւնները սկսած են:

«Զարմանագան» 2020՝ արեւմտահայերէնով ամառնային ծրագիրը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու շրջանը, Յուլիս 12-էն մինչեւ Օգոստոս 7: Պիտի ունենայ միաժամանակ երեք բաղադրիչներ.

- 10-էն 17 տարեկան պատանիներու համար նախատեսուած ստեղծագործական ծրագիր մը,
- 18-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ստեղծագործական յայտագիր մը,
- Խտացեալ համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն, ու վաւերացուած Փարիզի *Արեւելեան յեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնակին (Ինալֆոյին)* կողմէ:

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն զանազան աշխատանոցներու պիտի մասնակցին: Ասոնց կարգին՝ տեսողական եւ լսատեսողական արուեստներ, երաժշտական եւ մարմնային արտայայտութեան զարգացում, թատերական խաղեր, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, խմբային եւ մարզական խաղեր, բնութեան մէջ պտոյտներ եւ ճամբորդութիւններ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ յարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ հայերէնը, մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ղեկավարութեամբ:

«Զարմանագան»ը բաց է Սփիւռքի պատանիներուն եւ երիտասարդներուն: Տրամադրելի տեղերու թիւը սահմանափակ է:

Նկատի պէտք է ունենալ նաեւ հետեւեալ պարագան. երիտասարդներու խումբին մասնակիցները անհրաժեշտ է որ գիտնան առնուազն միջին մակարդակով հայերէն մը:

Իսկ համալսարանական խտացեալ ծրագիրը, զոր պիտի վարեն մասնագէտ դասատուներ, 15 ուսուցիչ միայն կ'ընդունի: Ծրագիրը կ'առաջարկէ մանկավարժական այժմէական մօտեցումներու եւ առարկաներու վրայ հիմնուած դասախօսութիւններ եւ խմբային աշխատանքներ:

Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք

[www.zarmanazan.com](http://www.zarmanazan.com) կայքէջը:



Արձանագրութիւնները պէտք է կատարուած ըլլան մինչեւ 19 Յունուար 2020, Կրինուիչի ժամով ժամը 23:00-ին:

Բոլոր արձանագրուողներուն հետ կապ պիտի հաստատենք 6 Փետրուար 2020-ին:

*« Գալուստ Կիւլպէնկեան » Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը 2017-ին  
ձեռնարկեց «Զարմանազան» մանկավարժական յայտագիրին, որպէս արեւմտահայերէնի  
վերաշխուժացման ծրագրի մէկ բաժինը: Ան կազմակերպուած է Լիոնի Հագար ու մէկ  
աշխարհ ընկերակցութեան եւ Փարիզի Արեւելեան լեզուներու եւ  
Քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկին համագործակցութեամբ:  
«Զարմանազան» ծրագիրը վաւերացուած է Ֆրանսայի Երիտասարդութեան եւ  
մարզանքներու նախարարութեան կողմէ:*